

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶՅԱՆ

Ա. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԸ

ԵՎ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍԼ

Հին ու միջին դարերից եկող պատմական, գրական և ընդհանրապես ձեռագրական մի ամբողջ շարք տվյալներ հավասարապես վերաբերում են ս. Սահակ Պարթևի և «Մեսրոպ Մաշտոցի երաժշտական գործունեությանը». Որպես արդամիք դրանք համեմատված ու քննական մոտեցմամբ օգտագործուած են արդեն մեր «Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը» ուսումնասիրության մեջ¹: Ավելորդ կիմեր պատեղ կրկնել ողբորագիտական նոյն մահրախտոյզ աշխաղանքը, տրամաբանական շեշտերի փոքր ոչչ այլ տեղաբաշխմամբ: Ուստի օգտվելով հիշյալ աշխատանքի արդյունքներից, ու հաջի առնելով նաև մի խումբ լրացուցիչ, հատկապես Սահակ Պարթևի անձի և գործի հետ առնչվող հա-

վելյալ տվյալներ², ողղակի անցնենք դրանց ողջ միակցությամբ պայմանավորվող

² Հմտու.՝ Վարդ Սրբոց Սահակայ Պարթևի՝ հայոց հայրապետի (Հ. Մ. Ավգերյան, Լիակատար վարք և վկայաբանություն սրբոց, Վեճետիկ, 1811, էջ 131—161): Պատմութիւն վասն սրբոց Սահակայ հայրապետին և Մեսրոպաց վարդապետին (Սովետը հայկական, Բ, Վեճետիկ, 1853, էջ 5—42): Հ. Գ. Զարպիանալյան, Պատմութիւն հայերէն դպրութեան (հին մատենագրություն), Վեճետիկ, 1865, էջ 165—172: Հ. Գ. Զարպիանալյան, Հայկական թարգմանութիւնը նախնեաց, Վեճետիկ, 1889, էջ 57—59, 245—272 և այլոր: Ե. Տնտեսան, Նկարագիր երգոց Հայաստանաց և կենեցու, Կ. Պոլս, 1874, էջ 140—141: Ս. Սահակ Պարթև (արտատպություն «Լուսայ», Խանդեսից), Թիֆլիս, 1902: Հ. Ն. Ակիմյան, Մեծ Սահակ կաթողիկոս հայոց, «Հանդիսամուրա» 1935, էջ 470—504: Հ. Ն. Ակիմյան, Ս. Սահակի վերագրված կանոնները, «Հանդիսամուրա» 1940, № 1—12, էջ 48, 1947, № 1, էջ 2: Հ. Դ. Ալիշան, Հուշիկը հարենաց հայոց, Ա, Վեճետիկ, 1920, էջ 280—316: Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, Ա. հատ., մասն Ա, Պերութ, 1959, էջ 255—326: Հ. Անալյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1943, էջ 350: Մ. Աքրոյան, Երևեր, Գ, Երևան, 1968, էջ 103—104, 134—136, 527—528 և այլոր:

¹ «Բանքեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964: Տես հատկապես էջ 162—174, որը քնննում են այս աղբյուրները, որոնք ցոյց են տալիս նաև Սահակ Պարթևի Եշանակալիք մասնակցությունը ձայնագրելիք կարգավորության գործին, նույն երաշտամանկավարժական գործունեությունն ու տեղագրագրական փաստակը:

հարցերի ստացադրմանը և քննությանը: Այդ հարցերն են՝ Սահմակ Պարթևի ընդհանուր ու երաժշտական մոռահորիզոննի բացադիկ լայն ընդգրկումը, երա մասնակցությունը հայ երաժշտության ձայնեղանակների վերակարգավորությանը, մանկավարժական գործունեությունը, երաժշտա-բանական ժառանգությունը. և, վերջապես, նպաստը ծիսական կարևոր մատյանների հայացմանն ու հայրապետական կարգադրություններն այդ մասին:

Ա.

Հայ իրականության արտակարգ երևույթից է Սահմակ Պարթևը, ընդհանուր ու երաժշտական խոր և ընդարձակ գիտելիքներով: Ներսես Մեծի որդին՝ դաստիարակվել ու կրթվել էր հասուկ պարմաններում, և տարիներ շարունակ ուսամել Կեսարիայի և Բյուզանդիայի հոչակված դպրոցներում, շփոթ ժամանակի կարկառուն դեմքերի հետ: Ղ. Փարպեցին հետևյալն է հաղորդում, ցոյց տալու համար և Սահմակի ստացած կրթության բարձր աստիճանը. «Եյծ այցելավ անցուցաներ վարժիք զրազում գիտնովքն Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ երգողական տաղիցն և հուետորական որդուաց յայտնաբանութեան, ևս առուել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստց ցուցանիր»³:

Մի կողմ մնենք համեմատության մեջ չափազանցության դիմելու միտումը: Անիթը, որից օգտվում է Փարպեցին, հաղորդելու համար սույն տեղեկությունը, շատ մասնավոր է: թե ինչպէս Մաշտոցն ու աշակերտները, թարգմանությանց ընթացքուն հաճախ դիմում էին կաթողիկոսին, նրանից սովորելոյ «զարթութայիցն գաղափար», այսինքն՝ վանդի մասին ուսմունքին վերաբերոյ այս կամ այն գիտելիքը: Հասկանալի է, ուրեմն, թե ինչո՞ւ նա չի շոշափում, ասենք՝ Սահմակի աստվածաբանական պատրաստությունը, լեզուների հմացությունը (հայերեն, հունարեն, ասորելեն, պարսկելեն, պարսկելեն) և առհասարակ «Անքին» ու «Արտաքին» մարզերին վերաբերող այն բոլոր հմտությունները, որոնք հնարավոր դարձին հոգեվոր, մշակութային և պետական վիճակարի գործի կազմավորումը: Գործի, որն արելելամ-քրիստոնեական քաղաքակրթությանը ընծայեց ազգմանցված մի նոր ու ազատամիտ եկեղեցի, գրական մի նոր ու ճոխ լեզու, և «Թագումի թարգմանութեանց» կոչվող մեծարժեք մի կոթող:

Նմանապես, Սահմակ Պարթևի երաժշտական հակումների մասին Փարպեցու խոսքերը, տվյալ կապակցության մեջ, լոկ այն են հաստատում, որ հայրապետը հմուտ է եղել հունական «երգողական» (իմա՝ ձայնավոր) տառերին վերաբերող երաժշտա-քերականական հինավորից ուսմունքի մասնահատուկ բնագավառում, ու դրանով՝ նաև ընդհանրապես երաժշտարվեստի հարցերում:⁴ Այս կետը, սակայն, «Բնուտորական յորդաստացութեան» և «Կիլիստոփայական արուեստից» հետ իրականում կոչված է ընդհանուր գծերով բնորոշելու համարիստունեական երևելի այն միջավարը, որուել ուսանել է և Սահմակը, ու նաև թափանցիկ ակնարկով հարազատեցնելով նրան այդ միջավայրում IV—V դր. ապրած մի ամբողջ շարք հշանավոր գործիչների թե նրանց աշակերտների հետ (ինչպէս դա ճշտ ընկալեց ժամանակին Հ. Ղ. Սիլիշանը):

Հիրավի, Սահմակի ուսումնառության ու հետագա բեղմնավոր գործունեության բոլոր պարագաները ևս գալիս են թեկարդելու հետևյալը: Լուսավորչի տոհմի շառավիղն ու Մամիկոնյանների տան ազգականը Հայաստանում ուներ, անշուշտ, արյունակից, ազգային-հայրենասիրական իդեալներով տոգորված և արժանի գործակիցների ի դեմս Մերուպ Մաշտոցի և Վոածշապուիթի: Բայց ուսման, կրթության, հոգևոր կոչման և ընդհանուր գաղափարախոսության հողերի վրա նա մտուի ու սրտակից էր մի շարրօտարազգի (Քիմնականում հույն) կարեւուուն գործիչների հետ ևս, որոնք էին նրա ավագ, տարեկից ու կրտսեր ժամանակակիցները. Արանասա Ալեքսանդրացն (Մեծը) և Կյուրեղ Երոսաղեմացից, Բարսեղ Կեսարացին, եղբայր՝ Գրիգոր Նյուսացին, Գրիգոր Սատվածարանը, Եղիշան Կիսուրացին, Հովհան Ուկերերաց, Կյուրեղ Սկերսանդրացին, Պրոկի Կատանեմուպուսեցին, Ակալիսու եպիսկոպոսը (Մելիտինեի) և որիշներ:

Մրանցից ունաք Սահմակ Պարթևի ընկերակից-քարեւեսմներն են եղել, ոմանք նրա յողակիցները, ուրիշներ՝ ավելի ներսես Մեծին ճանաչողներ՝ նրան հայրաբար ընդունելով յարատել, դաստիարակել են, ճանապարհ են ցոյց տվել և այն: Խակ Սահմակն իմքը հոգեմարագատ է զգացել իրեն նրանց բոլորի ըկատմամբ: Ոչ միայն զարգացման աստիճանով, այլև խառնվածքով:

³ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն հայոց և Թուլք առ Վահան Մամիկոնեան, Տիվիս, 1904, էջ 15—16:

⁴ Հմտության մեջ հոդվածը՝ Դիտողություն Փարպեցու առաջնորդության մեջ Սահմակ Պարթևին վերաբերող մի արտահայտության մասին, «Բանիեր Երևանի համալսարանի», 1970, էջ 3, էջ 177—181:

Եվ ոչ միայն հրանց, այլ միևնույն պատմաշրջանում ծաղկած արևմտյան թե արևելյան մյուս հայրերի նկատմամբ ևս՝ Եփրեմ Խորին Սարու, Սմբրոսիսի, Հերոնիմոսի և մանավանդ ս. Օգոստինոսի: Մեզ համար կարեր է, որ այս կարգի հոգևորականը, մուտք գործելով հայ մասնագիտացված երգարվեստի բնագավառը, այդ արվեստի բուն խկացման իրման շրջանում, հանդես կգար հաւու ու առաքելությամբ: Եվ իրոք, այն ամեն իր ինչ ասել ենք Մեսրոպ Մաշտոցի մասին, հայ երգարվեստի զարգացման մեջ նրա հայացած բացանիկ ու վճռող դերի առամով, սկզբունքրեն (և ողջ ծավալով) երկրորդելի է նաև Սահակ Պարթևի վերաբերյալ: Այնպէս, որ մեր առջև ծառացող խնդիրն այստեղ, իր կարերը մեկ մասով, հանգում է միևնույն նպատակները հետապնդած երկու տարբեր անհատականությունների գործունեության ու ժառագության մեջ առկա տարբերիչ երանգների որոշմանը:

Բ.

Ս. Սահակի և ս. Մաշտոցի աշխատությամբ հայ երածշտության ձայնեղանակների վերակարգավորությունը ժամանակից քննել էինք գլխավոր գծերով և սկզբունքրային հարթության վրա, մի կողմ թողնելով մասնավոր խնդիրներ և նույնիսկ վերակարգավորված ձայնեղանակների թվաբանակի ու դրանց և ծիսական մատյանների հարաբերության հարցերը: Այժմ անհրաժեշտ է անդրադառնալ ճիշտ վերջին կետերին:

Գիտենք, որ Հայատանում, հեթանոսության շրջանում, տեսության մեջ հաշվի առնվազագույնը ձայնեղանակները թվով չորսն են եղել⁵: Հայտնի չեն, թե ձայնեղանակների ինչպիսի համակարգ էր վավերացրել հայ եկեղեցին IV դարում⁶: Իրենց թվաբանակով, ասկայն, գլխավոր ձայնեղանակները այս շրջանում ևս չորսից չեն անցել: Դա պարզ հասկացվում է նույնիսկ Հայութապուրքներին անցած հնագոյն մի գրվածքից, որտեղ հաստատագրված տեղեկությունների հետ հաշվի է նաև Կոմիտասի վարդապետը ես⁷: Սահակ Պարթևի,

⁵ Մեսրոպ Մաշտոցն ու նացոց նոգեր երգարվեստը, Եշվ. հրատ., էջ 174—178:

⁶ Քննական տեսության հայոց հին և միջնադարական երածշտության պատմության (Ա), ԳԱ «Երարք», 1970, № 10, էջ 26:

⁷ Հմտությունը կանոնագրությանը համապնդին, 1971, Դ, էջ 37—38:

⁸ Տե՛ս Կոմիտաս, Հոդվածներ և տումնապիրությունը, Եշվ. հրատ., էջ 161—208:

Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների նաև երածշտական գործունեության մասին պատմող այդ գրվածքում կարդում ենք.

«Երարին և երգս շարականաց և կարգեցին եղանակս ամենայն ձայնից, զորս բաժանեաց ի միմեանց սորք հայրապետն, նոգեի տէրմ՝ Խահակ Պարթևն՝ տասն ձայնս ըստ թուոյ Ժ արարածոց, որ են. երկինք և երկնայինք, երկիր և երկրայինք, ծովք և ծովայինք, օդք և օդայինք, հրեշտակը և մարդիկ: Այլև ըստ թուոյ Ժ բանեան օրինացն Աստուծոյ...: Այլև Ժ փորձանացն Արքահամու...: Այլև Ժ աղի քնարին, որով Դափիթ զալըմուն երգէր...: Զի Ժ սորք է և նույն Աստուծոյ...: Եւ ինքն Ժ ի չորից գոյանայ...: Այսպէս և ի Դ ձայնից Ժ բարդեցաւ: Եւ Դ ձայնքն ի չորից տարեցս ունին զգոյութիւն: Որպէս և Է առաջի ձայնն ի հողոյն: Եւ երկրորդմ՝ ի չորոյն: Երրորդմ՝ ի յաւոյոյն: Եւ չորրորդմ՝ ի հորոյն: Եւ ի Դ ձայնից բաժանեաց զշորս կողմըն. առաջի կողմն, առաջ կողմն, վաս, վերջինն և Բ բատեղին, որք ունին և այլ յատկութիւնն: Զի առաջի ձայնն ի հիւսնականէն է, երկուն (sic!) ի դարբենին է, երեքմ՝ ի գետոց, Դ-ն՝ յաղօրեաց, Ե-ն՝ յերկաթոյ, Չ-ն՝ ի ծովու կենդանեաց, Է-ն՝ ի ծովու ծիփանաց, Ը-ն՝ յանանոց, Թ-ն՝ ի գազանաց, Ժ-ն՝ ի թոշնոց, որովք միշտ փառաբանի Աստուծած ի բարձունք»⁹:

Խորքն այստեղ վերաբերում է հայոց հին Սաղմոսարան-ժամագրքին: Այն, որ վերջինս ընդգրկել է նաև ստեղի եղանակները, երկում է ինչպես մեզ հասած մեղեդիական հոլութից¹⁰, այնպէս և վաղ միջնադարյան հայ գիտնականների երածշտա-տեսական ասուլյան-

թյուններ, Երևան, 1941, էջ 116 (որտեղ գիտմական իրավացիորեն հաստուկ մատնաշում է մեզ նետաքրրորդ գրվածքի այն տեղիները, որ ձայնեղանակների վերաբերյալ հալորդվում է՝ «ի Դ ձայնից Ժ բարդեցաւ», «Ո Դ ձայնից բաժանեաց զշորս կողմըն» և այլն):

⁹ Գիրք որ կոչի Այսմատուք, Կ. Պոլիս, 1730, էջ նոյ—նւ (նաև Մատնադարան, ձև. № 7362, էջ 62ա—բ): Անհրաժեշտ է նիշեցնել, որ հնագոյն ցոյց տվեց նետաքրրությունը, V դարասկրում հայոց ձայնեղանակների վերակարգավորումը իրագործել են Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը (միասին): Տես Մեսրոպ Մաշտոցն ու հայոց նոգեր երգարվեստը, Եշվ. հրատ., էջ 161—208:

¹⁰ Հատկապես կանոնագրությունների գործորդությամբ հարատևած երածշտությունից: Հմտությունը կանոնագրությունները՝ Հայարակ օրերի կանոնագրությունները, «Էջմիածին», 1971, Դ, և Հանդիսավոր օրերի կանոնագրությունները, «Էջմիածին», 1971, Թ ու ԺԱ:

որից թե հոդվածներից¹¹: Այլ առիթներով նշել ենք արդեն, որ սահմակ-մերժապան թարգմանչական-բարենորդչափան եռուն գործունեության տարիներին մեղեդիական ոգալի հարատություններ և տեսական ու գործնական կարևոր գիտելիքներ էին կուտակվել հայոց հոգևոր երաժշտական մշակույթի ասպարեզուն: Անմիջական էր տակավին՝ հեթանոսական երգ-երաժշտության կենական տարրերի ներթափանցումը: Ըստք մեկ դար հայերը մոտիկից շփվել էին ասորական և հունական հոգևոր երգեցության, հատկապես՝ սաղմոսւերգության ավանդությաներին: Հայ երևոյթին, դեռևս IV դարում հունարենից բանավոր կերպով թարգմանվում էին համարդիասոննեական մի բանի երգերի գրական խոսքերը¹²: իսկ գրերի գյուտից հետո, հայերենով՝ առ ի ծանոթություն՝ լոյս էին տեսնում Եփրեմ Աստոր կցուրդները¹³:

Դարձաք՝ նոյն IV դարում է սկիզբ առնում հայերեն հեքնություն կցուրդների հորինանա արվեստը, որ մեծ ծաղկում է ապրում գրերի գյուտից հետո: IV դարի գործիշներից նաև երգիշ-երաժիշտն է եղել նոյնին ներսէ Մեծը¹⁴: Որով զարմանք չեն առթում շարականների մեջինակների միջնադարյան առաջին ցուցակագիրներից մեկի՝ Սարգիս Երեցի (XIII—XIV դդ.) այն խոսքերը, որոնց համաձայն՝ «զշանգաւտ-

¹¹ Տես, օրինակ՝ Մովսես Սյունեցու (կամ «Քերոսոյի»), «Յաղագ կարգա կեկեցւոյ» աշխատությամ՝ մեր իրադրան իրապարակումը. Մովսես Սյունեցին և նրա «Յաղագ կարգա» գրվածքը, «Արարեք հասարակական գիտությունների», 1972, № 11:

¹² Որանք, որ մինչև օրս էլ հարատնել են հայոց պատուերգության մեջ, թվով շատ չեն (ինչպես կարծում էր Լ. Շահովը: Հմտն. նրա՝ Երկեր, հաս. 9, Ալինարկ մը հայ բանահատության վրա, Բեյրութ, 1946, էջ 100—101, որտեղ կարդում ենք. «աղյօներուն ու շարականներուն մեկ հայնական ու հիմնական մասը թարգմանված կամ հարմարեցված է IV դարուն մեջ, քրիստոնեության մոտքի ու տեղավորման օրերուն» և այլն): Աղյօթներից մենք պատեղ կիրառակինք տերունական «Հայոց մեր»-ը, իսկ երգերից՝ առավոտյան «Փառք ի բարձունա» ու երևոյան «Արք զուարք»-ը:

¹³ Տես Կցուրդը Ս. Եփրեմի Խորին Սարույ (Բրատարակից Հ. Ն. Ալինյան), Վիեննա, 1957: V դարում թարգմանված ու պատուի ներկայացված 51 կցուրդներից (մատրաշե) և ոչ մեկը չի անցել պատուերգության մեջ:

¹⁴ Այդ մասին պատմական տեղեկությունները տևու Սոֆիերը, Զ, էջ 781:

եանն սուրբ Ներսէս Պարթևն ասաց»¹⁵: Հանգստյան երգերի կարգը մեկ հեղինակի գործ չէ¹⁶: Բայց նրա մեջ կան և մի քանի հնագույն կտորներ, որոնք մնալով քննելի՝ Սարգիս Երեցի հաղորդած տեղեկության լուսի տակ՝ միևնույն ժամանակ հավանելի են որպես IV հարյուրամյակի երգեր: Իսկ V հարավակրուտ լուս տեսած հայերեն ինքնուրույն կցուրդների ամենակարևորուն հեղինակները՝ իրենք ու Սահմակն ու ս. Մերոպն են եղել:

Սակայն, մտահոգված լինելով, գիտակության, նոր հայացած ավանդական սաղմուների և օրինությունների ամենօրյա երգեցողությունը միաձն կաղապարի մեջ կայտնացնելու խնդրով, մշակութային կյանքի երկու ուսմիջրաները որպես երգարան կազմել և կանոնական են հոչակել հայոց հնագույն Սաղմոսարան-Ժամագիրը¹⁷. ու կարգավորելով հայոց ձայնեանակները, ութ խմբի են բաժանել դրանք, ըստ հիշյալ Սաղմոսարանի ութ կանոնների¹⁸: Սուանձնապես կարևոր է, որ այս կերպով գոյացած հայկական ութ-ձայնի համակարգը, որ հա-

¹⁵ Մաշտոցի անվան Մատենարարան, ձեռ. 2092, էջ 228բ:

¹⁶ Այդ կարգի մանրամասն քննությունը հասուն խնդիր է: Այստեղ միայն ասենք, որ Գրիգոր Տաթևացին էլ իր կազմած ցուցակում Պետրոս Գևոստադրին է հատկացնում դրանք (տես Գրիգոր Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 637): Մինչեւ այժմ արդեն հայտնի է, որ հանգստյան շարականները մեծ մասամբ շատ ավելի հիմ են. ու կամ ձեռքբարական ուրիշ տվյալներ ևս (թեև դրայալ թեական), որոնց համաձայն նոյն շարականները հորինել է Սահմակ Պարթևը (Բմնտ. Սահմակ վլդ. Ամասունի, Հիմ և նոր Պարականուն կամ ամբակեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 64—65, 176):

¹⁷ Կցուրդ երգերի ժողովածուի կազմման համեմատած աշխատանքները վերաբերում են VII դարին: Ներսէս Խշանցի կարողիկով պատվերով արդիշի մի ժողովածու կազմում է Բարսեղ Շոն երաժիշտ վարդապետը, որ և կոչվում է «Ծնննտիր» (տես մեր կոդվածը՝ Բարսեղ Շոնը և մասնագիտացված երգաստեղության ծաղկումը Հայաստանում VII դարում), «Բաներ Երևանի համալարանի», 1978, № 1): «Ծնննտիր», սակայն, որ անհիսացել է հայկական Շարականցի հիմքը, կանոնական ժողովածուի ուժ է ստացել շատ ավելի ուժ՝ հավանարար IX—X հարյուրամյակներուն:

¹⁸ Դա երևում է նույնին մի շարք գրչագիր սաղմոսարանների լուսանցքներում հիմ սպլուտում հարատևած ձայնային հշումներից: Տես օր.՝ Մատենարարան, ձեռ. № 1642:

րատևել է շորջ կես հազարամյակ¹⁹, նեագույներից մեկն է քրիստոնեական արվեստի պատմության մեջ²⁰:

Գ.

Տարված լինելով նաև ճգնավորական կյանքով, Սահմակ Պարթևը տակալին գրերի գյուտից առաջ աշակերտներ է ունեցել, թվով 60, որոնց հետ միասին ժամանակի մեծ մասը հատկացրել է պաշտոներգությանը, ինչպես պարզ տեղեկացնում է Խորենացին: «Քանի ստացաւ աշակերտու վարչուն ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպոդէց, արք կրօնաւոր, խարագնացք, որը յար ընդ նմա շրջէին. որովք մշտրնշենաւոր պաշտամամբ կատարէր զիանոնն, որպէս զայն որք յանապատսն էին, և հոգայր զաշխարհն, որպէս զայն որք յաշխարհի էն»²¹:

Պատմահոր վերջին խորենը (աշխարհակաների հոգնոր կարիքները ևս հոգալու մասին)՝ փաստորեն այն են վկայում, թե ո. Սահմակ ու իր 60 աշակերտները մինչեւ գրերի գյուտը զբաղվել են նաև բանավոր թարգմանություններով, զանգվածներին սովորեցնելով հայերենի վերածված սաղմուներ, աղոթքներ, բացատրելով դրանց իմաստը և այլն²²: Գրերի գյուտից հետո սահմակ-մեսրոպյան հայկին աշակերտները երկու մեծ ուսուցիչների անմիջական օգնականները դարձան, ի հարկին արտասիման (Եղեսիա, Բյուզանդիա) մեկնելով, այնուելից Սատվածաշնչի և ծիսական ու այլ մատյանների ընտիր օրինակներ բերելով և թարգմանական աշխատանքներին մասնակցելով: Իսկ նորաստեղծ դպրոցների համար հատկապես ծողովնեցին շնորհալի որիշ մանուկներ ևս, որոնք ուսումնառությունից հետո լծվելով հայ գրավոր մշակույթի կառուցման նույն գործին, ան-

վանվեցին կրտսեր թարգմանիչներ կամ երկրորդ աշակերտներ: Սրանցից ընտրյալներ նոյնական մեկնեցին արտասահման (Ալեքսանդրիա, Բյուզանդիա, Աթենք), ուսումը լրացնելու: Մշակույթային հիշյալ մեծ կենորոններում սահմակ-մեսրոպյան թե առաջին, և թե երկրորդ աշակերտության ներկայացուցիչները հմտանում էին նաև երաժշտարվեստի տեսությանն ու գործնականին վերաբերող հարցերում:

«Եւ իսկ և իսկ ի հրամանէ մեծին Սահմակայ ժողովակ մանկուն խոհեմամիտու-տեղեկացնում է անանոն կենսագիրը, թե պետև շփոթելով առաջին ու երկրորդ աշակերտության խնդրին կապված հանգսմանքները— տրամախոհն, քաջուշելու, փափկանգու, և դպրոց ըստ գաւառաց գաւառաց կարգի: ուսուցանել մեծով պընդութեամբ. և հարիր տասն ամ էր ի սրբոյն Գրիգորէ յորժամ զուա գիր ազգիս մերոյ. և զայնափ ծամանակու ի յայլալեզու դեգերանս էին տասանեալ, վասն որոյ առաւել փոյլ յանձին ունեին զի երագ վարժեցին մանկունք յիւրաքանչիր տեղիս, յորոց ընտրեցին յուով վարտուն յաշակերտելոցն, զա-ուուել ուշիմս և զիփիկածայնս և զերկարոցիս, և առաքեցին յազգս և ի լեզուս օտար գաւառաց, ուսանել իմաստութիւն և արուեստախօսութիւն, և առնել թարգմանութիւն...: Եւ այսպէս— շարունակում է կենսագիրը, պընդեզու խոշոր բաղաքներում շանսափարաքար ուսանած հայ պատանիների մասին—...ծրանային՝ տքնեին, աշխատէին՝ հարցասէր լինեին ուսանելով, կըրթելով, վարժելով, վաստակելով, պատրաստելով զանձինս ի յերկս օգտակարս, և ի գործ շահակտու, ոմանք զտափի գծագրութիւնս շահաւորեալ, ոմանք զիմաստ հաւաքեալ, զուսումնականն, զբնաքանականն, զերկրաչափականն, զիմանրողականն, զերածուականն, զաստեղաշխականն, զըրավանան և զըրդողականն. ըզգործնականն և զուսական իմաստափրութիւն և զմաստես նոցա որք են յուով երկուտասան»²³:

Գալով Հայաստանի տարբեր վայերում գործած նոր դպրոցներին, արդեն գիտենք, որ դրանցում Մաշտոցը ուսուցանում էր նաև հայ երաժշտության վերագրավորված ձայնեանակները²⁴: Նոյնը անում էր Սահմակ Պարթևը ևս, ու հայկանարար՝ ավելի ընդալին մշտիանված ծրագրով՝ գործին ծայր

¹⁹ Կցուրդ երգերին վերաբերող ձայնեանակները ևս, որոնք համակարգեց Ստեփանոս Սյունեցի Բ-ը, Սաղմուարամին կապված եղանակների միակցությունը ետ մեջով նրա տեղը բունեցին «Ծննդնութիւն» կանոնացմանը զոգընթացքար, ուստի նոյնական մասին անում գործին, ան-

²⁰ Հմտն. G. Reese, Music in the Middle Ages, New-York, 1940, էջ 71—75 (ուր քրիստոնեական ութ-ձայնի վարդապետության ծագմանը վերաբերող նմագույն փաստերից առաջ բերված ու բննարկված են լոկ մինչև VI դարը համար տվյալներ. իսկ հայկական ութամասն Սաղմուարամին ձևավորումը վերաբերում է V դարասկզբին):

²¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Տրի-դիս, 1913, էջ 320:

²² Ազգապատում, նշվ. հրատ., էջ 261:

²³ Պատմութիւն վասն սրբոյն Սահմակայ հազրասինին..., Սոֆերը, նշվ. հրատ., էջ 18—16:

²⁴ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգնոր երգարվեստը, նշվ. հրատ., էջ 179—184:

տպով՝ ձամելանակների սկավածքներից²⁵, հասնելու համար մինչև ստեղի եղանակները: Խնդիրն այն է, որ Սահմակ Պարթևը իր մանկավարժական գործունեությունը կենտրոնացնում էր մեկ դպրոցում՝ Վաղարշապատի վարդապետանոցում, որը հայոց մայր ուսումնարանն էր (ու մնաց մինչև V դարի վերջերը):

Սահմակ-մեսրոպյան առաջին աշակերտներից որպես երաժիշտ Երևանի է միայն հանդիպությունների հայտնի: Նրան Կորյունը «աստուածաւոր պաշտօնելից» գիւտավոր է կոչում²⁶, Խորենացին՝ «սարկաւագեւու»²⁷: Մյուսների երաժիշտ լինելու մասին որոշակի ոչինչ չգիտենք: Հարության ավագ օրինություններից տպանավոր եղողին Ստեփանոս Սլունեցի Ա.-ը, ըստ բոլոր տվյալների, պատկանել է կրտսեր աշակերտների փաղանգին²⁸: Վերջինիս մեջ կարկառուն երաժիշտներ են եղել նաև՝ Հովհան Մանեակունից²⁹ և Գյուտ Արամեզացին, Մովսես Խորենացին³⁰ և Դավիթ Սահմալը³¹: Անհրաժեշտ է անտեսել մշակութային վաղ-քրիստոնեական համաշխարհային կենտրոնների խոշոր դերը նաև ավագ ու կրտսեր թարգմանիչների երաժշտական կրթության մեջ: Միևնույն ժամանակ, սակայն, հրանց մտաքրելիս, անհրաժեշտաբար գիտակցում ենք արդեն՝ սահմակ-մեսրոպյան հոգածության ու մանկավարժական գործունեության մեծագույն նշանակությունը ևս՝ նույն հարցում:

Դ.

Սահմակ Պարթևի թողած ժառանգության (հատկապես ինքնուրույն, ոչ թարգմանական գործերի) մեջ կարևորագույն տեղ ունի նրա երաժշտա-քանաստեղծական ստեղծագործությունը: Մյուս բաղկացած է եղանակավոր քարոզներից, դրանց կից՝ արտասանական թվերգով կատարվող աղոթք-

ներից, և կցուրդ կոչված հոգևոր ազատ (առաջին կանոնացումից դորս մնացած), տոնական երգերից, որոնք հետագարում կանոնական հոչակլելով վերադասավորվեցին և ամփոփվեցին ձեռագիր շարակնոցների մեջ³²:

Սահմակյան եղանակավոր քարոզները թվով չորսն են և վերաբերում են հնագոյն Սաղմոսարան-Ծամագրքի հյութերին: Հանկապես՝ գիշերային ու (նրա շարունակությունը կազմող) առավոտյան ժամի երգեցողությանը: Դրանք նաև գիշերային հրակման ժամանակ ավելացվել են ուժ սաղմոսականոններին: Կրկնվելով կցվել են երկուական (բայց ոչ հաջորդական) կանոն-

³² Մենք չենք անտեսում «Օրինակությանը ցուցակ»-ի հաղորդած տեղեկությունները: Աշխատ տարբերվում են խորհրդակատարությանց վերաբերու թույն և ասորի հայրերի շարադրած ու գրերի գյուտից մետք հայերենի բարգմանված մի շարք կանոնները: Ըստ նմին Սահմակ Պարթևի մասին ասվում է. «Խակ վասն Քահանայօրինելից» պրոյց Սահմակ է արարեալ յառաջին ամի հայրապետութեան իրոյ. (այլ օր՝ սրբոց Սահմակայ գծեալ յան քան և մի ամի եպիսկոպոսութեան իրոյ) ի նաւասարդի ամսեանն. որ օրն մի էր և յշատակ սուրբ Կարապետին. արար և զհահանայթաղերն, որ ունի եօթն աւետարան. այլ և զնշանարմաթաղն ի Քաղաքութաշտի (այլ օր՝ Արարատ գաւառի ի Վաղարշապատ քաղաքի) ի վկայարան սրբոց Հոկիսիմեանց, յևս նարիդ մետասան ամի սրբոյն Գրիգորի. զի մինչև ցայն վայր հնուվ վարեին» (տես Հայկական թարգմանութիւնը նախնաց, Եշվ. իրաւ., էջ 247):

Բայց հայտնի է, որ ընդհանուր առմամբ հնուց նկող այդ գրությունը մինչև մեր օրերն հասնելով որոշ փոփոխությունների է ենթարկվել: Բայց այդ, փոփոխություններով են հասել մինչև մեր օրերն նաև մեջքերգած հատվածում միշված կանոնները (կամ կարգերը՝ Զեռնադրության, Քահանայապահի և Աշխարհաթաղի): Այսունեւու, սույն և նման կանոններ, -որոնք Սահմակ Պարթևի կարգադրությամբ և հսկողությամբ հայերենի թարգմանվելով. Մեսրոպ Մաշտոցի նեկավարությամբ ամփոփվեցին «Մաշտոց» անվանված որոշում ծխարան մեջ, —առանձին դեպքերում հունարենից թարգմանվել են նաև Հայաստանում նոյնիսկ Գրիգոր Լուսավորչի ժամանակներից կամ ընթիւնաբաց գրերի գյուտից առաջ կիրարկված նախօրինակներից եղողին մեջ պատկանելության հարցը տակապին քննելի է: Խակ որ կարևոր է նաև հայկական հնագույն «Մաշտոց»-ի կանոններում երգվող հատվածները ուրիշ բան չէն, բան սաղմոսներ, կանոնագլուխներ, և հավատիա՝ այլուստ հայտնի կցուրդ երգեր:

²⁵ Տես մեր հոդվածը՝ Ութ ճայնի սկավածքները, «Հշմահիմ», 1972, թ:

²⁶ Նույն տեղում, էջ 88:

²⁷ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Եշվ. իրաւ., էջ 356:

²⁸ Հմմտ. մեր հոդվածը՝ Մյուսնեցի համանուն երկու երաժշտներ և Հարության ավագ օրինությունները, «Հշմահիմ», 1978, թ:

²⁹ Հ. Բ. Սարգսյան, Քննադատութիւն Յովհան Մանեակունություն և իր երկասիրութեանց վրայ, Վեհանիկ, 1895, էջ 85:

³⁰ Գ. եպիս. Արվանդյանց, Հեղու և Արորց (Պատմություն վասն Դաւիթ և Մովսես Խորենացուց), Կ. Պոլիս, 1874:

³¹ Հմմտ., մեր հոդվածը՝ Դավիդ Նեպօնենու և պրման մայքա, „Советская Музыка“. 1968 №8.

ների³³: Չորս քարոզները միշտադարյան ձեռագիրում երբեմն վերագրվել են նաև Սեպուհ Մաշտոցին³⁴: Սակայն այդ մասին տակալին Հովհան Օճեցու արձանագրած հստակ տեղեկությունը հարցը լուծում է հօգուտ Սահմակ Պարթևի³⁵: Քննարկվող քարոզները մեզ հասել են մեղեդիի երկու հիմնական տարրերակով³⁶, քայլ միևնույն Գծ դարձածք ձայնեղանակում³⁷: Եվ դրանց ձայնեղանակային հիմքի նախնականությունը հաստատվում է ճրանով, որ Մովսես Սյունեցին Գծի մասին ասում է, թե «սովոր յարինեցան քարոզք տրվնչեան և ի գիշերոյ»³⁸: Գրական բնագրի ու մեղեդիի փոխարարերության, ինչպես և կշռույթի ու կառուցվածքի տեսակետով այս քարոզները շատ մոտիկ են սաղմոսներին: Երաժշտության վառ անհատականացված բնույթով, սակայն, պայծառ գույներով, բարձր տրամադրությամբ և մարդկային շերմ շնչով՝ դրանք իսկույն տարրերին են սաղմոսներից: Դրանց ազդեցությունը նկատելի է հա-

³³ Դրա հիման վրա է, որ քննարկվող քարոզները ձեռագիրում հաճախ հիշանակվում են զոյզ կանոնների սկզբանարարի մեջերումով, ինչպես «Քարոզ Երանելոյ և Երրև» և այլն (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 594, էջ 28): Հայտ այդմ, աղավաղումներից ազատ գրչագրերում սաղմոսականոնները հիշատակվում են՝ 1—5, 2—6, 3—7 և 4—8 զուգորդումներով:

34 Նոյն տեղում:

35 «Պարու և արծան է—գրում է Օճեցին—ի գիշերապատաման, զկանոնացն զմես բերել զշորս զայս քարոզութիւն: Վասն ի վերուստ խաղաղութեան, Վասն ի գիշերի և ի տորենչեան, Վասն ուղղելու զենաց մեզ շնորհ: զոր արարեալ է վասն նորին իրի սրբուն Սահմակայ հայոց կաթողիկոսի: Եւ ըստ իրաքանչիրոցն զաղօթս զայստիկ հանգստափիքն իրեանց» (Մեջերում է՝ «Տէր Աստուած Մշտածնաւոր», «Ի գիշերի և ի տորենչեան», «Ամենալ եմք առաջի քո» և «Օրինակ և Տէր Աստուած մեր» աղոթքները, իրենց «Բանգիստ» կոչված մատերիում): Ցովիսանու Խմատասիրի Ալմացոյ մատինագրութիւնը, Վենետիկ, 1958, էջ 42:

36 Մատավորապես՝ հասարակ և հանդիսավոր օրիք համար (Ծրգը ձայնագրեալք ի ժամագրոց, Վաղարշապատ, 1877, էջ 175—188):

37 Մելեդիի հիմնաձայն է երկրորդ վերնախաղ կիսալոր (Վերջում ութեակալին գեղեցիկ զարտուղարմ դեպի առաջին վերնախաղ կիսալոր): Բայց դա շփորության տեղիք պետք չէ տա: Բավական է ձայնագրությունը փոխադրել փոքր եղանակածք, և այդ եռարում հիմնաձայնը կդառնա երկրորդ փուշը:

38 Մոլուս Սյունեցին և ճրա «Յաղագ կարգաց» գրիվածքը, Եշվ. Բրատ., էջ 91:

յոց ժամագրքի մի շարք ուրիշ նկութերի վրա:

Գալով կցուրդ (հետագայում շարական կոչված) կտորներին, արդեն գիտենք, թե ինչպես Սահմակ Պարթևի ստեղծագործությունները տարբեր գրչագրերում վերագրված են եղել Սեպուհ Մաշտոցին³⁹. և կամ ընդհակառակը՝ այլ երգիների հեղինակություններ Սահմակ Պարթևին⁴⁰ և այն: Վերջինիս երաժշտա-բանաստեղծական վատակին վերաբերող հին, վտամելի աղբյուրների ընձեռած տվյալները, սակայն, հատակ են ու իրար փոխադարձարար լրացրնում և ստուգում են: Այնպես, որ նոյնինկ ստանց հաստոկ դժվարության հանգել ենք համապատասխան եզրակացության, ամբողջացնելով ու ճշտելով «Սեպուհ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարիւտը» ուսումնասիրության մեջ ընդհանուր առմամբ հշվածը⁴¹: Ըստ այդմ, Սահմակ Պարթևի գրքին են պատկանում՝ Ղազարի հարության կանոնի երգերը, Ծաղկազարդի կանոնի երգերը (որոնցից «Բարց»-ը XII—XIII դարերից հետո պարականն է մնացել)⁴², երկրորդ Ծաղկազարդի հին կանոնի երգերը (որոնցից «Բարց»-ն ու «մեծացուցէ»-ն XII դարից հետո պարականն էն մնացել)⁴³ և

39 Սեպուհ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարիւտը, Եշվ. Բրատ., էջ 171:

40 Ինչպես օրինակ՝ Հանգստան շարականները:

41 Հմտու: «Բաներե Երևանի համալսարանի», 1970, № 8, էջ 181:

42 Հ. Գ. Ամենայիշյան, Բացատրութիւն Ծաղկանց, Վենետիկ, 1814, էջ 210: Կանոնիս այժման հարցը՝ «Որ ի քրվեական», Ընորհալունն է:

43 Երկրորդ Ծաղկազարդի տոնը հանդիպել է Համբարձման հաջորդ կիրակին: Այդ տոնին վերաբերող սահմական երգերը լրիս են եղել, Դճ ձայննեղանակություն: Օրինություն երկու պատկերով («Թագաւոր գոյով» և «Յորժամ եկն Ֆիսու»), հարց («Բարեկանեալ ես», գործատույթ), մեծացուցէ («Ուրախ լեր մայր լուսոյ», ողորման («Զգալուս քո») և տեր երկնից («Ու յարուեան աւոր»): XII դարում Գրիգորիս Գ Պահմակունի կաթողիկոսը (Ծորիհալու երացրը) տոնին համար նոր կանոն է հորիմում՝ «Մեծաբրաչ այս խորհուրդ» (իր սարքով): Հետագա հայութամշակների ընթացքում սահմական երգերը սատիճանարար կցվում են բուն կամ առաջին Ծաղկազարդի (այսինքն՝ «Գալատիան տեսան յիոռուսակէմ» խորագրով հայտնի) կանոնի երգերին: Հարցն ու մեծացուցէն ի վերջու պարականն են մնում, իսկ մնացած չորս կտորները, որպես մի երգի պատկերներ կատարվում են բուն Ծաղկազարդի օրինությունից առաջ, իրեն նետուակ շարական: Այս ընթացքը, սակայն, այնքան դանդաղ է համփա հարթում, որ միշտադարյան նոյնինկ ընտիր շարականցներում հանդիպում ենք հակառական պատկերների: Մաշտոցի անվ. Մատենադարանի

ավագ շաբաթվա բոլոր օրերի կանոնների երգերը (ի բաց առյալ Բ2, Գ2, Դ2 օրինակությունները՝ «Անեղն ի հօրէ», «Խմաստուն կուսանքն» և «Որ յաթող փատաց», որբաթօրվա «Այսապ ի կատարումն» ու շաբաթօրվա «Կենաչն յախտենից» և «Կուսածին մարմնով» շարականները):⁴⁴ Օրինությունների ինքնուրուն պատկերները և հարցերին կից գործատները պահանջն-առանձին հաշվեռով՝ 62 երգ:⁴⁵

Եղողը է առկա են ինչպես Զայնագրքյալ Շարականցուն,⁴⁶ այնպես և, բնականարար, գրչագիր խազավոր շարականցներուն: Համեմատությունը ցուց է տալիս, որ առհասարակ համապատասխանություն կա այդ երգերի գրական բնագրերի, տեսակների ու ձայնեղանակների հջման՝⁴⁷ և մեղեղիների հյուպաձքի⁴⁸ առումներով՝ Զայնագրյալ և ձեռագիր շարականցներուն: Ծիծու է, մեզ հետաքրքրող ստեղծագործությունները զընելով համարքիստունեական և հայկական:

№ 1597 գրչագրում, օրինակ, երկրորդ Մաղկագարդի սահմական երգաշարքը լիիվ է (տես էջ 100ր—102ա): Խակ № 1578 ձեռագրում (էջ 100ա—100բ), խնդիրը լուծվել է մետկալ կերպ: Բուն Մաղկագարդի կանոնի Բկ ողորմային հաջորդող երեք երգերի փոխարեն առաջ են բերված երկրորդ Մաղկագարդի երգաշարքի՝ «Ուրախ լեր մայր լուսու», «Զգալուս բռ» և «Որ յարութեան առոր»: Այլ ձեռագրերում և տեսանում ենք որիշ դասավորումներ և այլն:

⁴⁴ Այս վեց երգերը նույնական Շնորհալուն են:

⁴⁵ Պարականներներ էլ միասին առած՝ 87 կտոր:

⁴⁶ Նկատի ունենք Էջմիածնական հրատարակությունը (1875 թ., էջ 378—487):

⁴⁷ Ինարկե, մի կողմ թողնելով Վրիփակի տպագործություն ստեղծող այնպիսի փասուեր, ինչպիսին է, օրինակ, Մատենադարանի № 6101 ձեռագրում ավագ երեքշարքի օրվա կանոնի «Անաւոր եւ թագաւոր» Գձ մանկություն անսպասելիորեն «Բկ» Զամականք (տես էջ 8ա) և այլն:

⁴⁸ Հյուսվածքի Վերաբերությամբ առավել ևս պիտի շնչուել, որ համապատասխանությունը գլխավոր գծերի մեջ է: Որպեսուն խստ մտնեցման դեպքում նարկ է դրտել մետկալ համամականերն ու հմանները: Երգաշարքերում ծանր կատարվող ենթակա կտորներին խազային հյուսվածքը աչքի է ընկնում խորոշական տարեր աստիճաններով: Մասն հարցերում գործատները, որպես լնութանոր կանոն, հյուսվածքում ավելի հագեցած են լինում: Ավագ մինչշարքի օրվա մեծ օրմնությունը (վեց պատկերով) խազավորված է լինում այնպես, որ հյուսվածքը աստիճանամարար է խոսանու: Այս կետերը Զայնագրյալ Շարականցուն համահարթեցված են: Վերս արդեն ըշեցինք մի քանի ձեռագիր շարականցներ: Հմտ. Աստենադարանի № 1576 գրչագիրը (էջ 102ա—127ա):

մասնագիտացիած երգարվելատի հնագույն շերտերին հատուկ արթաւագիտական մակարդակի մասին մեր գիտանքի լուսի տակ, հասկանում ենք, որ դրանց մեղեղիները ենթարկվել են ժամանակի նկատելի ազդեցությամբ: Մասամբ՝ մինչև դրանց գրական բնագրերի խազավորումը, և մասամբ խազավոր ժողովածուների մեջ անցնելով ընթացքում: Վերաբերվելով երկու երկու տուների ու ավագ շաբաթվակայի պաշտոներությանը, բնաւագրով ստեղծագործությունները արդեն սկզբից ենթակա են եղել կատարողական ճոխացման: Դա, ինչպես և առհասարակ ժամանակի երգարծությունը⁴⁹, ի վերջո նաև կեցրել են երաժշտական բաղադրիչի բարդացմանը երգաշարքի գգայի մատում⁵⁰: Անշուշտ, պարզ համուածներում ևս ամեն ինչ չէ, որ հնուց է գալիս: Ուշադիր բնեությունը ցուց է տալիս սակայն, որ նոյնինի անկախ արտաքին պարզության կամ հարաբերական բարդության ցուցիչներից, սահմական երգաշարքերում նոյնական պահպանական ինչպես մի քանի ընդհանուր, կարևոր, դարաշրջանային հատկանիշներուն աշքի ընկնող վատահելի գծեր, այնպես և ոճական առումով նախնական ու մեղինակային անհատականության դրույմ կրող որոշակի կտորները: Մասնավոր ուշադրության արժանի կետեր են՝ այս տեսակնետում՝ իրացված ձայնեղանակների միակցություն-

⁴⁹ Հատկապես զարգացած ավատակիրության շրջանում, Կիլիկիայում, երբ Վերանայվում էր մին երգերի երաժշտական բաղկացուցիչը (հմտ. մոր նոյնական Հանդիսավոր օրերի կանոնագույնները, «Էջմիածն», 1971, Թ, էջ 42, ճամոր 4):

⁵⁰ Այստեղ ամերածեցու է աշել մի երկու կետ ևս, ի լուսն վերը խազավորումների հյուսվածքի կապակցությամբ արդեն ապամին: Նկատելիորեն ընդգծված է Բձ, Գձ և Բկ ծանր երգերի եղանակների ողորուն և զարդարուն բնույթը, հատկապես մետամուտ տարրերի օգնությամբ: Ծնչուված է ավագ շաբաթի կանոններում ծանր կտորների աստիճանական ավելացումը, այդ կտորներին հատուկ երաժշտության բանական աճման միջոցով: Վերջապես, երգերի տվյալ շարքերում XII դարից հետո հայտնված մեղեղներ են՝ Ղազարի հարության կանոնի ստեղին՝ «Յիսուս Միածն», որ գալիս է Հովհանն Մարգարեի կանոնի ողորմայից («Շնորհալի»). բուն Մաղկագարդի Բկ ծանր ողորման ու տեղ երկնիցը՝ «Ուրախ լեր եկեղեցի» և «Զգալուս բագաւոր»: որոնք (երկուսն էլ) վերանադարձական էն Վարդապահի երկրորդ օրվա կանոնի Բկ ստեղի մանկունքի ազդեցության մերք («Օրմնեցէք մանկունք»—«Շնորհալի»). և ավագ որբաթու ու շաբաթ օրերի աստեղիները՝ «Եկապ հաւատակեալը» և «Ճովկւի քեզ հաւատացեալը»:

նը⁵¹, կշուրյի կազմակերպման սկզբունքները վանկային, ծորեգային և կառուցվածքային տիպի ծանր կտորներում⁵², այլև խոսքի ու երաժշտության փոխակազմության առաջնային ձևերի պահպանումը հանկարծաբանական ծանր երգերում⁵³:

Վանկային երգերի մեջ հնագույն ոճի և հեղինակի անհատականության դրոշմը պահպանած լավագույն կտորներից է Ղազարի հարության աճ դարձված օրինությունը՝ «Այսօր գոյով ի Բեթանիա»: Խնչպես նկատել է տակավին Կ. Կոստանյանը, V դարի հայ բանաստեղծ-երաժշտները Ծննդյան և Հարության նվիրված երգերում աշխարհի բարոյական վերանորոգությունը ենթադրող պատումների այլարանական մոքերի տակ հասկանում էին նաև սեփական ժողովրդի ազատագրությունը օտար ծից⁵⁴: Դա ակնարկում է նաև Սահմակ Պարթենը նույնիսկ քննարկվող ատեղծագործության կրկնակում⁵⁵: Վանկային կոտորների շարքում հիանալի հնուշներ կան նաև ակ

⁵¹ Այդ միակցության մեջ եմ՝ աճ—դկ գրեթե բոլոր ձայնեղանակները. աճ, ակ, գճ և դժ դարձվածքները և նույնիսկ ստեղի եղանակը (ամեկան այն փաստից, որ վերջին, տվյալ դեպքում, ստավել մեծ փոփոխությունների է ենթարկվել դարերի ընթացքում: Ուշագրավ պարագաներ են նաև՝ թճ ձայնեղանակի լայն կիրարկումը, որ հասուկ է եղին նոգուր ինքնուրպը, ազատ (ոչ կանոնական-պարտադիր) երգերի հատվածին. և թճ ծանր մեղեղինը նորում ոչ հազվադեպ դեպքի գայիք գճ և գլ ուղղված շեղումների առկայությունը, որ խոսում է համապատասխան մեղեղինը հնագույն արմատների մասին:

⁵² Հատկապես՝ միջակ ու մեծ և կարճ ու մեծագույն վանկերի փոխմարարերությունը գունե ընդհանուր գծերի մեջ կայունացնելու միտումը:

⁵³ Դարձայ՝ գլխավոր գծերով: Որովհետև հանկարծաբանական ծանր երգերում կարճ, միջակ, մեծ ու մեծագույն վանկերի հենց անկայուն փոխմարարերության պատճառով խոսքի ու երաժշտության ձևականական դիրերը, ընթանրավես ասած, փոխվում են հօգուտ երաժշտական բաղադրիչի: Բաց տարբեր տևողության վանկերի հնան փոխմարարերությունը աստիճանաբար է նաև ասպարհ հարթել: Այնպիս, որ հնագույն հանկարծաբանական ծանր երգերում գրական թեագործի ձևակառուցդական պաշտոնը տակավին էական է և որապի է:

⁵⁴ Կ. Կոստանյան, Հայոց բանահյուսության պատմություն, ձևութ. (ՀԱԳԱԹ, Կոստանյանի դիման, ծր. 74), էջ 38 և շարունակությունը:

⁵⁵ Այսպէս օրինակ, շարականի առաջին տան մեջ ասվում է.

«Այսօր գոյով ի Բեթանիայ

Քո ամենազօր հրամանաւրդ ձայնեցեր Ղազարու և դոդացաւ մահ,

դարձվածք և թճ, գճ ու այլ ձայնեղանակներում, նմուշներ, որոնք, ի դեպ, երգելու շրջման եղբեր են հանդես բերում մաշտոցյան երգերի հետ⁵⁶: Իրենց ամբողջության մեջ, սակայն, սահմակյան և մաշտոցյան երգերը, ունենալով դարաշրջանային մի քանի ընդհանուր հատկանիշները, միաժամանակ գգալի տարբերվում են իրարից: Վաղոց նկատված պահանջան երկույթը անցյալում ճիշտ չի բացատրվել⁵⁷: Մեծ պահքի ժամանակամիջոցը, որի համար հորինված են մաշտոցյան ապաշխարության սաղմոսատիպ երգերը, բոլորովին ուրույն տեղ ունի եկեղեցական տարիվա մեջ: Մինչդեռ սահմակյան երգերը հորինված են երկու տոների և ավագ շաբաթի համար, ավելատարանական պատումների հարաբերականը: Դրանք վերաբերում են կաթողիկոսանիստ կենտրոնի ստեղծագործան-կատարողական ավանդույթների ոլորտին: Եվ դրանցում դրսնորված է որիշ (քան Մաշտոցը) խառնվածքի տեր մեղինակի ներաշխարհը: Արդարն, Շերքնապես պոյեկուն, վշտագին քննարական մաշտոցյան ապաշխարության երգերից մի ուղի է մեկնում, որ հասնում է մինչև նարեկացին, երա Ողբերգության Մատյանն ու մասամբ նաև տաղերը: Խակ սահմակյան հեզական ու մեղմանուշ, լուսավոր թափիծով աղղված

Դժոնիք պարտեցաւ, ապականութիւն լուծաւ.


Կենդանարար Քրիստո կեցո զմեզ»

(ընդգծում մերն է—Ն. Թ.):

⁵⁶ Տես օրինակ, ավագ երկուշարթի թճ տեր երկնիցը, ավագ չորերշարթի գճ ուղրման, ավագ մինչաշարթի ակ դարձվածք մանկումը և այլն:

⁵⁷ Դրանք են՝ «Ճի պարզությունը, բովանդակության հստակությունը, կերպարների ինքնատիպությունն ու տրամադրության հանդիսավորությունը», որ հշում է Կոստանյանը, Շարականի Էմինաց թարգմանության երկորդ հրատարակության առթիվ գրած Առաջարանում (տես Շարական, Բոցույշենի կառուն և պատմությունների մեջ, 1914, էջ 15):

⁵⁸ «Սահմակ հունական կրթություն ստացած լինելով—գրում էր Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը—մի նոր հոսանք է մոցրել (իմա՝ ի հակառակություն ասորականի), որով մկնել են մեզանում հունական ուղղության հետևել և գուցն դրամից է, որ ս. Սահմակի անվամբ մնացած շարականները իրենց կազմությամբ և ոգով տարբերվում են այն մյուս հնագույն շարականներից»: Տես երա՝ Հայոց նկելացված Պատմություն, մասն Ա., Վաղարշապատ, 1908, էջ 121: Այս մոտեցումը հիմնավորական մերժելու համար բավական է թեկող հիշել, որ Մաշտոցը ևս հունական կրթություն էր ստացել մանկուց: «Ի մասնակիութան տիմս վարժեալ հեղենական դպրութեամբ» (Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 36):



վիպա-քնարական լայնանուն երգերը հանապարի են հարթում դեպի Ծնորհալու արվեստը⁵⁹:

Նշված կետերը առավել ցայլում արտահայտված են տաղաչափված խորքերով կառուցվածքային և հանկարծաբանական փոքրածավալ ծանր երգերում, որոնք Սահմանի առեղծագործության մեջ կարևոր տեղ են բռնում: Կառուցվածքային ծանր երգերից ուշագրավ են հնագոյն գեղեցկության այնպիսի տիպարներ, ինչպիս են՝ ավագ որբաթի օրինության բժի երկրորդ պատկերը («Ի գիշերին լորում մատներ»), ավագ երեքարթի գձ մանկութքը («Ահաւոր եւ թագաւոր»), բուն Ծաղկազարդի կանոնի ամա օրինությունը («Որ վերօրինիս»): Այս և նման այլ կտորների երաժշտա-բանաստեղծական ամբողջական կերպարը խորհրդապատկան (սիմբոլիկ) է և հասկանալի է դառնուուն երբ տեղադրվում է վաղ միջնադարի մասնագիտացված երգարիւսատին հատուկ խորհրդապատշտության (սիմբոլիզմի) համարիստունեական ոլորտի մեջ: Վերլուծեղի այսպիսի երգերի լոկ գրական բնագրերը, դրանցում ոչ հազվադեպ հանդիպում ենք բնական (երբեմն նույնիսկ կենցաղային) ու գերբնական երևությունը անմիջականորեն գուգակշեղով մեծ հակադրություններ ստեղծելու հնարանքին⁶⁰: Ասենք

«Որ վերօրինիս յաթոռուս Քերովբէից,
Ի վերայ նըստիլ յաւանակի համեցար»:

Երաժշտական բաղադրիչը, սակայն, թեւկը է տալիս ոչ թե այս սուր հակադրությանը՝ այլ՝ տվյալ դեպքում՝ «խորհրդալի հշանի» մոտապատկերին կապված միասին մի ապրումի:

Հնդհանրապես ասած, քննարկվող ծանր երգերի մեջ կառուցվածքային տիպարներից դեպի ավարտուն հանկարծաբանականը տանող միջն ծներ է կան: Եվ գոյն դրանց հիմնա վրա է, որ գաղափար պետք է կազմենք հանկարծաբանական երգերի V դարում ունեցած մակարդակի մասին:

⁵⁹ Վերջին պարագան ակնարկել է տակալին Հ. Դ. Ավշանը, խոսքը մասնավորենով սահական շարականների հատակ, մաքուր, ողորկ ու վսեմ լեզվի շորշ (հմտն.՝ Հուշիկը Բայրենյաց Բայոնց, Օշկ. Բրատ., էջ 297): Բայց Սահմակ-Ծնորհալի գուգամնոց այժմ պարզ մեանելի է Երաժշտա-բանաստեղծական արվեստի միացալ մակարդակով ևս:

⁶⁰ Սա մատնացուց է արել Մ. Արենյանը ևս ու բերել խոստու օրինակ ավագ շարաթ օրվա կանոնից:

«Պագևատուն ամենացուն

Այսօր խնդրի պարզեւս ի Պիղատուէ».
և այլն (հմտն.՝ Արենյան, Երկն, Գ, էջ 551):

Այդ միջանկար ձևերին հանդիպում ենք մի քանի ձայնականակներում: Ուշադրությունը սկսուելով բժի ձայնականակի վրա, որ առկա է 12 ծանր կտոր, անհրաժեշտ է նշել, որ վերջիններին նոխացման մեջ հշանակալի դեպ են հասացել, մասնավորապես, Ծնորհալու երաժշտականորեն համատիպ շարականները, որոնք ընդմիջարկում են սահմական երգերը⁶¹:

Այս տեսակետով՝ միջանկար ձևերի շարքում առաջին կամ սկզբնական տատիճանի վրա կարելի է դեմք նույնիսկ վերոհիշյալ «Ի գիշերին» երգը, որում, համեմայն դեպս, ծայր է առնում ուղրումների ընդգծման մի նոր ընթացք: Դրան շատ մոտիկ է կանանած անմիջապես նախորդող «Արծաթսիրութեամբն մոլեալ Յուղա» կտորը: Հետո, ավելի բարդ հյուսվածքի կտորներից գալիս են՝ ավագ հինգչարթի հարցը (գործատնով): «Ո, ոյսդ ի հայրական ծոցոյ», Ղազարի հարության կանոնի հարցը «Աստուածային գոչմամբ», և ավագ երկուչարթի հիմաստալից, ճոխ հարցը «Որ արարիչն եւս»: Սրանցից Ղազարի հարության կանոնի հարցը և ավագ ուրբաթի երկրորդ օրինության առաջին պատկերը («Արծաթսիրութեամբն»), արժանի են հատուկ ուշադրության: Առաջինը՝ արհեստագիտական (տեքնոլոգիական) տեսակետով, որպես բժի թեկուզ ունացած եղանակի մեջ եկաէջի նախնական կմախքն ու դեպի գձ-ու գկ կատարված հնագոյն շեղումները պահպանած

⁶¹ Հարկ է նշել, որ Ծնորհալին գիտակցական մուսուլ ինքն է ժամանակին ստեղծագործուն յուրացել Սահմակ Պարթենի երաժշտա-բանաստեղծական լավագոյն ավանդությունները, և բողոքուեցել ու ծաղկեցրել է հրա երգերի, ինչպես մի-երկու ուրիշ, այնպես և բժի եղանակները իր շարականներում: Բայց վերջիններին ազդեցության տակ փոխվելով, նոր ժամանակների (XII—XIII դ.) ճաշակին են ժամանակախանցվել նաև սահմական նախօրինակները: Դրականում այսպիսին են՝ փոխհարաբերությունները ավագ շարաթ օրվա կանոնի օրինության երեք պատկերների միջն, որոնցից առաջինը («Պարգևատուն ամենացուն») Սահմակն է, իսկ մեանցած երկուու («Կենդանին յախտենից» և «Կուսածին մարմնով») Ծնորհալունը, և որոնք, սակայն, երեքն է այսօր ունեն բժի ծանր եղանակի ոչ միայն նոյն կաղապարը, այլև հյուսվածքի միննույն բարդությունը: Մի քայլ ևս առաջ գնալով կարող ենք ասել նաև թե՝ բժի ծանր երգեցությանց այս մակարդակն է, որ ազդել է ավագ ուրբաթի երկրորդ օրինության պատկերների վրա ևս (ինչքան էլ որ սրանց եղանակները փոքր-ինչ այլ կաղապարով են). և առմասարակ դուռ բացել՝ սահմական բժի ծանր մյուս երգերի եղանակների նորանոր նոխացման համար:

նմուշ: Երկրորդը՝ կերպարային ցնցող բովանդակությամբ. Հուդայի, մատնության և դավաճանության հավատենական հիմնացութով, որ, տվյալ դեպքում, բացահայտված է զարմանախառն ափսոսանքի արժանի տիտոր մի եղելություն վերապատմելու թախծալի շեշտերով:

Զ.

Վերջապես, նաև հայ մասնագիտացված երգարվեստի զարգացման խնդիրների ոլորտում են մեծ կաթողիկոսի այն ջանքերը ևս, որոնք կապված են ծիսական գրքերի ու կարգերի հայացման, այլև նոր կամ վերախմբագրված կանոնների հաստատման հետ: Սաղմոսարան-Ժամագրքի մասին խոսք եղավ վերը: Պատարագը հայացել է Բարսեղյան խորհրդամատույցի թարգմանությամբ⁶²: Խոկ Ծիսարանը (Օրինությունաքր ցուցակում թվարկված հյութերի միակցությունը, որ Մաշտոց անվանվեց)՝ տարբեր հեղինակների շարադրած համապատասխան կանոնների կամ Գրիգոր Լուսավորչի և Ներսես Մեծի օրոք խմբագրված և ընդունված բնագրերի թարգմանությամբ⁶³: Այսպիսով, V դարակըրում, ս.

Սահակի կարգադրությամբ, հակողությամբ թե նաև նրա աշխատությամբ հայացած եղան՝ Սերմնօրինների կանոնը (Գրիգոր Աստվածաբան), Զրորինների կանոնը (Բարսեղ Կեսարացի), Ապաշխարող կարգելու և արձակելու կանոնը (Կյուրեղ Երուսաղեմացի), Հոգեհանգստի և Քահանայաթաղի կանոնը (Եփրեմ Ասորի), այլև Ձեռնադրությանց կանոնը (հնուց բնդունված բնագրի հիման վրա), Աշխարհաթաղի կարգը և այլն:

Հանձին Սահակ Պարթևի հայ երաժշտարվեստ ունի Մաշտոցին հավասար մեծ երախտավոր:

Ի վերջո բերում ենք ոճականորեն բավարար չափով պահպանված սահակյան երգերից նմուշներ, մի այլ առիթի թողնելով որանց մասնավոր վերլուծությունը: Դրանք են (Կարգով), «Վասն ի վերուստ» քարոզը (մեկ տուն), Ղազարի Հարության կանոնի օրինության առաջին տունը, ավագ հինգշաբթի կանոնի մանկունքը (երեք տուն), և մեկական տուն՝ ավագ երկուշաբթիի կանոնի տեր երկնից, ավագ երեքշաբթիի կանոնի մանկունք և բուն Ծաղկազարդի կանոնի օրինության կտորներից*:

քերի ու սովորովների հաշվառմամբ կատարված թարգմանությամբ:

* Համապատասխան ձայնագրությունները՝ ամսագրի հաջորդ համարում:

